

Լիլիթ Ղազանյան

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի գիտաքարտուղար

Արդի պետության և իրավունքի տեսության, որպես գիտության, համար անկյունաքարային նշանակություն ունի անձի իրավասուբյեկտության ուսումնասիրությունը անձի իրավական դրության հաստատում:

Համընդհանուր ճանաչում ստացած սահմանման համաձայն՝ իրավասուբյեկտությունը՝ իրավաբանորեն ամրագրված սուբյեկտի հնարավորությունն է ունենալ իրավունքներ և պարտականություններ, ինքնուրույն իրացնել դրանք կոնկրետ իրավահարաբերության շրջանակում, ինչպես նաև կրել իրավաբանական պատասխանատվություն իր կատարած գործողությունների համար՝

Իրավասուբյեկտության բաղկացած է երկու հիմնական տարրերից՝ գործունակությունից և իրավունակությունից:

Իրունակությունը օրենսդրության մեջ ամրագրված սուբյեկտի ունակությունն է ունենալ իրավաբանական իրավունքներ և կրել իրավաբանական պատականություններ: **Գործունակությունը** օբյեկտիվ իրավունքի նորմերով ճանաչված սուբյեկտի ունակությունն է ինքնուրույն, իր գործողություններով իրականացնել իրավաբանական իրավունքներ և պարտականություններ (**ընդգծումը մերն է՝ Լ. Ղ. Ք.**):

Սինտույն ժամանակ, իրավաբանական գրականության մեջ տարածված է այն դիրքորոշումը, համաձայն որի գործունակությունը՝ օրենքով ճանաչված ունակությունն է ունենալու միայն իրավաչափ գործողություններ՝ իրավունքների և պարտականությունների ձեռքբերման, իրացման, փոփոխման և դադարեցման նպատակով¹: *Տվյալ*

¹ Կրոպակով Գ.Ն., Պետության և իրավունքի տեսություն, Երևան, Գոշ, 1997, էջ 363: Տե՛ս նաև Теория государства и права/Под общ.ред. О.В.Мартышина.М.,Норма. 2007.С.356.

² Տե՛ս Կարչենկո Մ.Н. Теория государства и права. М., МГУ. 2007.С.597-598.

³ Մանրանասն տե՛ս Подробнее см.:Теория государства и права/Под общ.ред. О.В. Мартышина. М., Норма.2007. С. 357.

դեպքում, կատարած իրավախախտումների՝ դելիկտների համար պատասխանատվության ունակությունը բացառվում է գործունակության բովանդակությունից, և կազմում ինքնուրույն իրավական կատեգորիա (խումբ)՝ դելիկտաունակություն (ընդգծումը մերն է՝ Լ. Ղ.Մ.։ Դելիկտաունակությունը պրենալոգիայում անխատեղված անձի ունակությունն է ինքնուրույն կրելու իրավաբանական պատասխանատվությունը՝ կատարած իրավախախտման համար⁵։

Համամիտ ենք, Ս.Ս. Ալեքսեևի այն կարծիքի հետ, որ իրավունքի սուբյեկտների մեծամասնության համար, անհրաժեշտություն չի առաջանում առանձնացնել և կիրառել դելիկտաունակությունը, քանի որ դելիտաունակությունը իր էությունով հանդիսանում է իրավասուբյեկտության կողմերից մեկը՝ ավելի կոնկրետ՝ գործունակության, որն արտահայտում է հնարավորություն ինքնուրույն իրականացնել ինքնուրույն իրավաբանական պարտականություններ։ Նրա կարծիքով պատասխանատվությունը ի վերջո հանդիսանում է իրավաբանական պարտականության կատարման տեսակին։ Սակայն, որոշ դեպքերում անհրաժեշտություն է առաջանում առանձնացնել, մեկուսացնել դելիկտաունակության հասակցությունը։ Օրինակ՝ 14-18 տարեկանները (անչափահասները) դելիկտաունակ են (չնայած որ օժտված չեն լռիվ գործունակությամբ), քանի որ պատասխանատու են իրենց կնքած գործարքներով, ինչպես նաև իրենց կողմից պատճառված վնասի համար՝ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով։ Ս. Ալեկսևի կարծիքով դելիկտաունակությունը (մեղսունակությունը) ինքնուրույն նշանակություն ունի նաև քրեական օրենքում⁶։ Այսպիսով, Ս. Ալեքսեևը ի վերջո չի տարանջատում «դելիկտաունակություն» հասկացությունը «իրավասուբյեկտությունից», ընդգծելով, դելիկտաունակության ինքնուրույն նշանակությունը միայն առանձին, կոնկրետ դեպքերում։ Այնուամենայնիվ, իրավունակությունը, գործունակությունը և դելիկտաունակությունը մեկ անձի մոտ ոչ միշտ չէ որ համընկնում, գտնվում են միասնության մեջ։ Առանձին դեպքում իրա-

⁴«Delit» տերմինը սկիզբ է առնում Ֆրանսիայի քրեական իրավունքից և ֆրանսերենից թարգմանաբար շանակում է իրավախախտում։ Մանրամասն տե՛ս Օ.Վ. Мартышина, М., Норма.2007.С.354.

⁵Մանրամասն տե՛ս Витрук Н.В. Общая теория правового положения личности.М., Норма.2009.С.93-96; Сергун А.К. О процессуальной правоспособности //Сов.гос. и право.1974.№2.С.31-37.

⁶Алексеев С.С. Проблемы теории права.Свердловск,1972.Т.1. С.286-287.

վունքի սուբյեկտ կարող են համարվել անձինք, որոնց կամքը անթերի չէ: Օրինակ, երեխաները (փոքրահասակները) և հոգեկան հիվանդությամբ տառապող անձիք: Վերջիններիս կամքը կամ թերի է, կամ էլ հստակ խեղաթուրված՝ հիվանդության պատճառով և հետևաբար, կամքը չի կարելի համարել ազատ: Միևնույն ժամանակ, այդ անձնաց խումբը օժտված է որոշակի շահերով և պահանջմունքներով, որոնց բավարարման և իրացման համար այդ անձանց անհրաժեշտ է ամրագրել իրավունքի սուբյեկտի կարգավիճակը, օժտելով նրանց իրավունքներով, օրինական շահերով և պարտականություններով: Պետությունը ճանաչում է այդ անձանց իրավունքներ կրելու ունակությունը (որպես իրավունք կրողների), սակայն միջոցներ է նախատեսում, որպեսզի այդ իրավունքների իրացումը ներկայացվի (իրականացվի) այլ անձանց՝ օրինական ներկայացուցիչների (ծնողների, խնամակալների, հոգաբարձուների) կողմից, որոնք ունակ են հոգուտ այդ անձանց կատարել ինքնուրույն, գիտակցված իրավաբանական գործողություններ⁷:

Խաթարված կամքով անձանց մոտ կամքի իրավաբանական նշանակությունը որոշվում է անձի, որպես իրավունքի սուբյեկտի, և նրա օրինական ներկայացուցչի միջև իրավասուբյեկտության տարրերի բաշխմամբ: Հայրենական իրավունքի որոշ ճյուղերում և ինստիտուտներում անչափահասությունը և կամքի թերածությունը ազդեցություն ունեն անձի իրավասուբյեկտության տարրերի բաշխման վրա: Այդ պատճառով, տվյալ ճյուղերում ինստիտուտներում, անմեղսունակներն ու անչափասները կարող են օժտված լինել իրավունակությամբ, բայց ոչ գործունակությամբ (և դելիկատունակությամբ): Անձի գործունակության սահմանափակումը չի հանգեցնում տվյալ հասարակական հարաբերությունների շրջանակում անձի իրավունակության կամ իրավական կարգավիճակի սահմանափակմանը, այլև նշանակում է իրավունքների և պարտականությունների ծավալի սահմանափակում, որոնցից անձը կարող էր օգտվել ինքնուրույն և դրանց անօրինակափ իրականացման համար կրել պատասխանատվություն: Իրավունակ անձի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչը և այդ դեպքում անձի (անձի սեփական գործունակության բացակայության դեպքում) իրա-

⁷Մանրամասն տե՛ս **Шепель Т.В.** Деликт и психическое расстройство: цивилистический аспект. Автореф. дис.... докт.юрид.наук.Томск, 2006.

վունակությունը լռացվում է մեկ այլ անձի գործունակությամբ: Ինչպես իրավացիորեն նշում են Օ.Ս. Իօֆֆեն և Մ.Դ. Շարգորոդսկին. «Քաղաքացիական իրավասուբյեկտության առանձնահատկությունն այն է, որ իրավունակությունն ու գործունակությունը չպետք է անհապաղ համընկնեն մեկ անձի մոտ և կարող են վերամիավորվել մյուս անձանց ունակությունների շնորհիվ»⁸:

Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ քաղաքացիական իրավասուբյեկտությունը (ինչպես և իրավասուբյեկտությունն ընդհանրապես) ընդգրկնում է ինչպես իրավունքներ ունենալու և պարտակալություններ կրելու ունակությունը, այնպես էլ և դրանց իրացումը:

Իրավագետներից շատերը նույնացնում են «իրավասուբյեկտություն» և «իրավունակություն» հասկացությունները: Ըստ Ա. Վենեդիկտովի՝ իրավունքի այն ճյուղերում և ինստիտուտներում, որտես օրենքը սահմանում է իրավունակության և գործունակության տարբեր նախադրյալներ՝ իրավասուբյեկտությունը հավասարազոր է իրավունակությանը (քաղաքացիական իրավունք), իսկ այն իրավունքի ճյուղերում և ինստիտուտներում, որտեղ օրենքը սահմանում է նույնանման (նույնատիպ) նախադրյալներ՝ իրավասուբյեկտությունը ներառում է ինչպես իրավունակությունը, այնպես էլ գործունակությունը⁹:

Այս դիրքորոշման հետ դժվար է համաձայնել մի քանի պատճառներով: Նախ՝ երևույթի իրական հասակցությունը (եությունը) չի կարող լինել բազմանշանակ: Երկրորդ՝ բացակայում են բավարար հիմքեր մեկ իրավական երևույթը բնորոշելու երկու տերմիններով, թողնելով առանց համապատասխան տերմինների մեկ այլ երևույթ: Կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրակացնել, որ այդպիսի թերություններից խուսափել են այն իրավագետները որոնք իրավասուբյեկտությունը իրավունքի բոլոր ճյուղերիում դիտարկում են որպես իրավունակության և գործունակության (դեղիկսաունակության) միասնություն: Այնուհանդերձ, իրավունքի ճյուղերում միասնական իրավասուբյեկտության գոյությունը չի բացառում վերջինիս կառուցվածքային տարրերի բաշխումը անձանց միջև (իրավունքի սուբ-

⁸ St' u Иоффе О.С., Шаргородский М.Д. Вопросы теории права.М., 1961.С.210-112.

⁹ St' u Венедиктов А.В. О субъектах социалистических правоотношений// Советское государство и право.1955.№ 6.С.20-21.

յեկտի և նրա օրինական ներկայացուցիչների միջև)¹⁰: Այս. հարցը գտնվում է գործնական ուսումնասիրությունների հարթությունում:

Դեռևս խորհրդային ժամանակաշրջանում իրավագետներից շատերը բարձրացնում են անձի իրավասուբյեկտության և դրա կառուցվածքիային տարրերի հասկացության, տերմինների օրենսդրական ամրագրման խնդրերը այն ոլորտներում, որտեղ այդ գործառույթը իրականացված չէ: Հարկ է նշել, որ վերջին տարիներին ժողովրդավարական սկզբունքների դրոմամբ, դրանք ամրագրվել են հետխորհրդային պետությունների օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում, ինչը գովելի է: Օրինակ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է քաղաքացու իրավունակությունը, գործունակությունը, գործունակության սահմանափակումը, անգործունակ ճանաչելը, դրանց իրացման գործընթացն ու այլ հետևանքները:

Անձի իրավասուբյեկտության սոցիալական նշանակությունն ու առանձնահատկությունները անհնարին է դիտարկել առանց մարդու ազատության հիմնահարցի քննարկման:

Հայրենական իրավագիտությունում «կամքի ազատության» հարցը քննարկվում է հիմնականում իրավաբանական պատասխանատվության համատեքստում: Կամքի ազատության մատերիալիստական ընկալումը հնարավորություն է ընձեռնում մեկնաբանել իրավական կարգավորման մեխանիզմի սոցիալ-հոգեբանական հիմքերն ու էությունը, ինչպես նաև, իրավական միջոցների դերը տվյալ մեխանիզմում:

«Կամքի ազատությունը» հասկացությունը ենթադրում է սուբյեկտի գիտելիքները շրջակա միջավայրի (աշխարհի) վերաբերյալ: Ընդ որում, սուբյեկտը պետք է գիտակցի, կանխատեսի թե ինչ հետևանքներ կարող է առաջացնել վերջինիս արարքը և ինչ միջոցներ է հարկավոր ձեռնարկել ցանկալի նպատակի հասնելու համար: Կամքի

¹⁰ St' u Иоффе О.С., Шаргородский М.Д. Вопросы теории права. М., Госюриздат. 1961. С. 208-212; Красавчиков О.А. Юридические факты в современном гражданском праве. М., 1958. С. 37-38; Алексеев С.С. Проблемы теории права. Свердловск, 1972. Т.1. С. 284-287; Чечина Н.А. Гражданские процессуальные отношения. Л., ЛГУ. 1962. С. 23-25. Щеглов В.Н. Гражданское процессуальное правоотношение. М., Юрид.лит. 1966. С.109; Ким А.И. Советское избирательное право: Вопросы теории, избирательного законодательства и практики его применения. М., Юрид.лит. 1965. С.79-80; Матузов Н.И. Личность. Право. Демократия: Теоретические проблемы субъектов права. Саратов, изд. Сарат. ун-та С.201.

ազատության շնորհիվ սուբյեկտի կամքը ինքնակողմնորոշվում է, կենտրոնանում նպատակի իրականացմանն ուղղված գործողությունների իրականացման վրա: Անձի գործողությունները պայմանավորված են ներքին և արտաքին ազդակներով, դրդապատճառներով (շահեր, գիտելիքներ, համոզմունքներ, պնձնական փորձ և այլ), որոնց շնորհիվ անձը ինքնակողմնորոշվում է իրեն շրջապատող աշխարհում: Ինքնակողմնորոշումը՝ պարտադիր օղակ է անձի գործողությունների օրինաչափության և պատճառահետևանքային կապի բացահայտման հարցում¹¹: «Կամքի ազատություն» հասկացության բովանդակությունը բացահայտվում է մի շարք հանգամանքներով՝ ցանկության ազատություն, վարքի ընտրության ազատություն, հարկադրանքի բացակայություն, անձի հուզական վիճակը և այլն: Այնուամենայնիվ, այն հանգամանքների բացարձակացումը հանգեցնում է սխալ հետևանքների և կամքի ազատության հստակության խեղաթյուրման: Այսպես, անձի ընտրության ազատությունը չի կարելի նույնականացնել կամքի ազատության՝ որպես ընդհանուր փիլիսոփայական հասկացության հետ, քանի որ ընտրության ազատությունը իրական ազատության առաջին աստիճանն է՝ ձևական (ֆորմալ) ազատություն, և արտահայտվում է սուբյեկտի ակտիվ ստեղծագործական գործունեությունում: Համամիտ ենք Մ.Բունզելի այն դիրքորոշմանը, որ անձը կարող է առնչվել ընտրության ազատության տարբեր հարթությունների հետ, օրինակ՝ անձի ընտրության ազատությունը արտաքին և ներքին (այլընտրանքային) տվյալների, ստեղծագործական ազատության մեջ, ինչպես նաև դրանց հետագա կիրառումը շրջապատող իրադարձությունների կառավարման համար¹²: Այդպիսով, գիտակցված ընտրության բովանդակությունը կարող է արտահայտել կամքի իրական (ռեալ) ազատության տարբեր մակարդակները:

Պետության և իրավունքի տեսությունում հաճախ անդրադարձ է կատարվում, իրավասուբյեկտության և անձի իրավաբանական իրավունքների, ազատությունների, պարտականությունների փոխհարաբերության հիմնախնդրին, որտեղ կարևոր դեր է հատկացվում իրավունակության էության բացահայտմանը:

Իրավաբանական գրականության մեջ իրավունակությունը, ոչ

¹¹Տե՛ս Самощенко И.С. Свобода воли и ее значение для правового регулирования общественных отношений // Советское государство и право. 1963. № 12. С. 15 - 31, 34 - 44.

¹²Տե՛ս Бунге. М. Причинность место принципа в современной науке. М., 1962. С. 212.

միայն պետության կողմից ճանաչվում է որպես անձի ունակություն ունենալ իրավաբանական իրավունքներ և պարտականություններ, այլև այդ իրավունքների և պարտականությունների որոշակի վիճակ: Այս դեպքում իրավունակության բովանդակությունը բացահայտվում է այն իրավունքների և պարտականությունների միջոցով, որոնք նախատեսված են օրենքով, սակայն անձի համար սուբյեկտիվ (առկա) չեն դարձել: Այդպիսին դրանք դառնում են իրավաբանական փաստերի հիման վրա և կոնկրետ այն իրավահարաբերությունների շրջանակում, որոնց տարր են այդ իրավունքներն ու պարտականությունները:

«Իրավունակություններ, - գրում է Ս.Ն.Բոատուսը, - որպես ինքնուրույն կատեօորիա, ունի նշանակալից է և արժեքավոր միայն որպես աբստրակտ, այսինք՝ իրավունքներ և պարտականություններ կրելու ընդհանուր հնարավորություն»¹³: Իրավունակությունը, սովյալ դեպքում, հանդիս է գալիս իրավունքներ ունենալու նախադյալի տեսքով: Մինևույն ժամանակ, իրավունակությունը հեղինակների կողմից ներկայանում է որպես իրավունքի սուբյեկտի իրավունքների և պարտականությունների որոշակի կարգավիճակ: Օրինակ՝ քաղաքացիական իրավասուբյեկտությունը, ըստ Բրատուսի, ընդգրկում է այն քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, որոնց կրողը կարող է լինել քաղաքացին որպես հասարակության անդամ (գույքայի և ոչ գույքային հարաբերությունների մասնակից): Իրավունակությունը, այսպիսով, հեղինակների կողմից դիտարկվում էր, որպես անձի իրավունքների և պարտականությունների դրսևորման նախնական՝ առաջին փուլ:

Այդպիսի մտեցումը Բ.Կ. Բեգիչևի համար տրամաբանական հիմք հանդիսացավ իրավունակությանն երկու բովանդակությանների առանձնացման համար՝ կամքային և իրավաբանական: *Իրավունակության կամքային բովանդակությունը անձի իրավունքներ և պարտականություններ ունենալու ճանաչումն է, իսկ իրավաբանականը՝ ձևավորվում է քաղաքացիների իրավահարաբերությանն մասնակցության նախադրյալ հանդիսացող իրավունքների ու պարտականությունների հիման վրա (ընդգծումը մերն է՝ Լ.Ղ.)¹⁴:*

Ս.Գ. Կեչեկյանն, իր հերթին, ներկայացնում է, իրավունքի նորմից

¹³ Братуев С.Н. Субъекты гражданского права. М., Госюриздат. 1950. С.6-7.

¹⁴ Տե՛ս և Бегичев Б.К. Трудовая правоспособность советских граждан. М., Юрид. лит. 1972. С. 110-111.

բխող անձի համար միայնց հերթափոխող վարքագծի 4 հնարավոր դրեորմներ 1) ընդհանուր իրավունակություն, 2) հատուկ իրավունակություն, 3) դեռևս կոնկրետ իրավահարաբերությունում չիրականացված սուբյեկտիվ իրավունք (աշխատանքի, կրթության իրավունք և այլն), 4) կոնկրետ իրավահարաբերությունում առաջացած սուբյեկտիվ իրավունք¹⁵: Որպեսզի հնարավոր լինի բացահայտել իրավունակության բովանդակությունը իրավունքների համալիրի միջոցով և միննույն ժամանակ տարբերակել իրավունքը՝ որպես իրավունակության տարր առկա սուբյեկտիվ իրավունքից, իրավագետներից ումանք հրաժարվեցին ձևակերպել իրավունակությունը, որպես, իրավունքներ և պարտականություններ ունենալու արստրակտ կամ ընդհանուր ունակություն և սկսեցին սահմանել իրավունակությունը որպես «իրավունքներ ունենալու իրավունք»: Այսինք՝ որպես «սուբյեկտիվ իրավունքը պոտենցիայում», կամ էլ որպես «պոտենցիալ սուբյեկտիվ իրավունքներ»¹⁶: Այպես, Ս.Ս. Ալեքսենի աշխատություններում իրավասուբյեկտությունը հանդիսանում է ընդհանուր կարգավորիչ իրավահարաբերություններում ներգրավված սուբյեկտիվ իրավունք: Անցնելով իրավասուբյեկտության ավելի կոնկրետ բնութագրման, նշում է, որ իրավասուբյեկտությունը միայն իր ելակետային տարրերով այն կարող է բնութագրվել որպես բլանկետային հնարավորություն՝ անձի հնարավորությունն ընթանալու որպես լինել իրավունքի սուբյեկտ, իսկ իրավունքի կոնկրետ ճյուղերի շրջանակներում՝ քաղաքացիական, աշխատանքային, վարչական և այլ իրավահարաբերությունների սուբյեկտ: Միաժամանակ, իրավասուբյեկտությունը իր այլ տարրերի շնորհիվ ունի կոնկրետացված բնույթ: Իրավասուբյեկտության այդ տարրերից են սահմանադրական իրավունքներն ու պարտականությունները, որոնք բնութագրում են իրավասուբյեկտության բովանդակությունը (ծավալը)¹⁷:

Կարծում ենք, որ վերը շարադրված դատողություններում առկա է իրավունակության բովանդակության հայտնի դասական ընկալման «արդիական» մոտեցումը: Սակայն, ընդհանուր առմամբ, դրանք կաս-

¹⁵Տե՛ս Кечекьян С.Ф. Правоотношения в социалистическом обществе. М., изд. АН СССР. 1958. С. 19, 31-34, 63.

¹⁶Ямпольская Ц.А. О субъективных правах граждан и их гарантиях// Вопросы советского государственного права. М., 1958, С. 160-161:

¹⁷Տե՛ս Алексеев С.С. Проблемы теории права. Свердловск, 1972. Т. 1. С. 279-280:

կածի տակ չեն դնում իրավունակության՝ որպես անձի իրավունքների և պարտականությունների որոշակի վիճակի արտահայտման ձևի հարցը (մինչև դրանց իրական տիրապետման պահը):

Հարկ է նշել, որ խորհրդային ժամանակաշրջանի իրավագենետերից շատերը փորձում էին բացահայտել իրավունակության բովանդակությունը: Այսպես, Ե.Ա. Ֆլեյշիցն գտնում էր, որ այնտեղ ուր իրավունքները քաղաքացիների համար անմիջականորեն բխում են իրավունքի նորմից, իրավունակություն կատեգորիան, որպես այդպիսին գոյություն չունի: Ըստ հեղինակի՝ իրավունակության ճանաչվում է քաղաքացիական իրավունքի, մասամբ՝ աշխատանքային իրավունքի համար, քանի որ հասարակական հարաբերությունների այդ ոլորտներում քաղաքացիների իրավունքները անմիջականորեն չեն բխում օբյեկտիվ իրավունքի նորմերից¹⁸: Մինչև օրենքով սահմանված իրավաբանական փաստերի ծագումը, իրավունքի նշված ճյուղերում անձի իրավունքները գտնվում են իրավունակության փուլում (վիճակում): Ըստ Ֆլեյշիցի՝ իրավունակությունը և կոնկրետ սուբյեկտիվ իրավունքները քաղաքացիական իրավունքում, հանդիսանում են միմյանց հաջորդաբար լրացնող հնարավորություններ՝ առաջինը՝ ցանկացած իրավունք ունենալու հնարավորություն (օրենքը մտտավոր թվարկում է դրանք), երկրորդը՝ հստակեցված հնարավորություն (կոնկրետ սուբյեկտիվ իրավունք, որն առաջանում է առաջին հնարավորության իրավունակության հիման վրա և դրա իրացման արդյունքում)¹⁹: Կարծում ենք ավելի ճիշտ է ընկալել իրավունակությունը որպես իրավունքներ և պարտականություններ ունենալու ունակություն: Հենց այդպիսի ունակությունները կազմում են իրավունակության բովանդակությունը, այլ ոչ թե իրավունքներն ու պարտականություններն ինքնին (թեկուզև ընդհանուր բնույթի): Այլ կերպ ասած՝ քաղաքացին պետք է օժտված լինի իրավաունակությամբ, որպեսզի կարողանա լինել իրավունք կրող սուբյեկտ: Այդ իրավունքները, օրենքի համաձայն, գոյություն ունեն իրավունակությամբ օժտված քաղաքացիների համար:

Հարկ է նշել, որ ինչպես իրավունակությանը, այնպես էլ անձի իրավական կարգավիճակի իրական բովանդակության և ինքնուրույն

¹⁸Տե՛ս Флейшиц Е.А. Соотношение правоспособности и субъективных прав // Вопросы общей теории советского права. М., 1960. С. 271 – 281:

¹⁹Տե՛ս նույն տեղում, էջ 282:

նությունն հնարավոր է պարզել միայն իրավունքների, ազատությունների և պարտականությունների դրսևորվորման փուլերի դինամիկ զարգացման միջոցով (ընդգծումը մերն է՝ Լ. Ղ.)²⁰:

Օբյեկտիվ իրավունքի նորմերով (նախ և առաջ՝ սահմանադրությամբ) նախատեսված, անձի իրավունքները, ազատությունները և պարտականությունները տարբերվում են իրենց դրսևորման, զարգացման (դինամիկայի) փուլերում: Հետևաբար, անհրաժեշտ է տարբերակել անձի իրավունքների երկու խմբեր, որոնք իրենց դրսևորման փուլերում օժտված են որոշակի առանձնահատկություններով:

Առաջին խումբը՝ այն իրավունքներն են, որոնք անձի համար անմիջականորեն բխում են օրենքից, առկա են անձանց իրավաբանական փաստերի ուժով: Այդ իրավունքները անձի համար անմիջապես հանդես են գալիս տիրապետման փուլում և դրանց ձեռք բերման համար անհրաժեշտ չէ հատուկ իրավաբանական փաստի առկայությունը: Դրանց թվին են դասվում քաղաքական, աշխատանքային, անձնական իրավունքներից և ազատություններից շատերը (լուսիքի ազատություն, ստեղծագործման բոլոր ձևերի ազատությունը և այլն): Մակայն իրավունքի տիրապետումը ոչ միշտ է ենթադրում իրավունքի իրացում, կամ օգտագործում (կիրառում), մինևույն ժամանկան այն այդեն իրավական հնարավորություն է օգտվելու կոնկրետ, հստակեցված բարիքից: Բարիքից օգտվելը կարող է երևան գալ իրավունքի ձեռքբերման պահից ավելի ուշ: Ուստի անհրաժեշտ է տարբերակել իրավունքի տիրապետման փուլի հետ մեկտեղ, ուբյեկտիվ իրավունքից օգտվելու դրա (անմիջական իրացման) փուլը: Իրավունքի իրացումը՝ դրա իրականացումն է որոշակի կամային արարքներով, որոնք կապված են այս կամ այն բարիքների օգտագործման հետ, որոնք իրենց հերթին ընկած են այդ իրավունքի հիմքում՝ անձնական և հասարակական կարիքների և շահերի բավարարման համար: Օրինակ՝ գույքի ձեռքբերուման փաստը հիմք է դնում սեփականության իրավունքի դրսևորման նոր փուլին՝ գույքի տիրապետմանը: Հեղինակության իրավունքը ծագում է գիտական ստեղծագործության ստեղծման փաստի ուժով (ստեղման պահից), սակայն այդ իրավունքից օգտվելը կարող է իրականացվել ավելի ուշ՝ քանի որ ստեղծագոր-

²⁰Витрук Н.В. К теории правосубъектности (правоспособности) как правоотношения //Труды Томского государственного ун-та: Вопросы государства и права. Томск. 1968. Т. 199. С. 5-7.

ծուրթունք կարող է տպագրվել շատ տարիներ անց:

Այսպիսով, բոլոր այն իրավունքները, որոնք անձը ձեռք է բերում օբյեկտիվ իրավունքի նորմերից անմիջականորեն, առանց իրավաբանական փաստերի, անձանց համար միանգամից գտնվում են տիրապետման փուլում, որը փոխակերպվում է օգտագործման փուլի:

Երկրորդ խմբին են դասվում այն իրավունքները, և պարտականությունները, որոնք նախքան անձի կողմից դրանց ձեռք բերումանը անցնում են հատուկ փուլ, որը նախորդում է տիրապետման փուլին: Իրավունքների և պարտականությունների դրսևորման այդ փուլը մենք պայմանականորեն անվանում ենք ընդհանուր վիճակի (կարգավիճակի) փուլ: Բոլոր այն իրավունքները, որոնք անձը ձեռք է բերում իրավաբանական փաստերի հիման վրա, իր համար սկզբնական շրջանում գտնվում են ընդհանուր վիճակի փուլում: Հետևաբար, սուբյեկտիվ իրավունքը ընդհանուր վիճակի փուլից անցնում է (փոխվում է) տիրապետման փուլ: Նախ և առաջ, դա վերաբերվում է քաղաքացիական, գույքային, և որոշ անձնական իրավունքներին (սեփականության իրավունք, ժառանգության իրավունք, հեղինակության իրավունք, և այլն):

Ընդհանուր վիճակի փուլի առանձնացումը անձի իրավունքների որոշ խմբերի համար օժտված է տրամաբանական և փաստական հիմնավորմամբ: Իրավունքների այդպիսի դրսևորումը բացատրվում է դրանց բովանդակության առանձնահատկություններով: Հասարակությունում գոյություն ունեն մարդկանց շահեր, որոնց բավարարման դեպքում հնարավոր չէ բացարձակ արդարություն՝ պայմանավորված հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով, քանի որ միշտ պահպանվում է մարդկանց փաստացի անհավասարությունը: Ընդհանուր վիճակի փուլում գտնվող իրավունքի, ինչպես նաև, և՞ տիրապետման, և՞ օգտագործման փուլերում գտվող նույն իրավունքի միջև առկա են այնպիսի կոնկրետ պայմաններ և փաստեր, ինչպե՛սիք են՝ աշխատանքի որակն ու տևողությունը, եկամուտների մեծությունը, ստեղծագործ ունակությունների մակարդակն ու բնույթը, տաղանդը և այլն: Նշված փաստերից բխում է, որ տվյալ մարդիկ իրավահավասար չեն: Երբեմն տիրապետման և օգտագործման փուլերը համընկնում են ժամանակով: Յուրաքանչյուր երախայի համար անվան իրավունքը գտնվում է ընդհանուր վիճակի փուլում: Այդ իրավունքի տիրապետող նա կհանդիսասանա, երբ ծնողները ան-

վանակոչեն վերջինիս և գրանցեն քաղաքացիություն կացության ակտերի պետական գրանցման համար սահմանված կարգով: Տվյալ պարագայում անվան տիրապետումը միննույն ժամանակ նշանակում է դրա օգտագործումը (կիրառումը): Դա հավասարապես վերաբերվում է բոլոր անձնական իրավունքներին և ազատություններին, սակայն այդ իրավունքները և ազատությունները ունեն իրենց արտահայտման առաջին փուլը՝ ընդհանուր վիճակի փուլը:

Այսպիսով, անհրաժեշտ է տարբերակել անձի իրավունքների, ազատությունների և պարտականությունների դրսևորման երեք փուլ, որոնք անմիջական ազդեցություն են ունենում իրավասուբյեկտության վրա՝ 1) ընդհանուր վիճակի փուլ, 2) տիրապետման, 3) օգտագործման (անմիջական իրացման) փուլը:

Հնարավոր են այս փուլերի այլ անվանումներ, սակայն խնդիրը ոչ թե եզրույթների այլ դրանց էության մեջ է: Ընդ որում, իրավունքների, ազատությունների, պարտականությունների դրսևորման փուլերի անհրաժեշտության թեզը չպետք է ընկալել այնպես, որ յուրաքանչյուր իրավունք պետք է ունենա դրսևորման բոլոր 3 փուլերը: Որոշ իրավունքների համար դրանք համընկնում են, իսկ մյուսներում՝ գոյություն ունեն որպես միմյան փոխհաջորդող փուլեր: Անձի իրավունքների, ազատությունների և պարտականությունների դրսևորման փուլերը արտացոլում են ոչ միայն դրանց, այլ և իրավասուբյեկտության զարգացման ընթացքը (դինամիկան): Հարկ է նշել, որ այն հեղինակները, որոնք շեշտադրում են, որ իրավունակության սոսկ իրավաբանական իրավունքների և պարտականությունների ունենալու ունակությունն է, և չեն առանձնացնում ընդհանուր վիճակի փուլը, ի վերջո հանգում են ինքնահակասման և նահանջում իրավունակության միանշանակ հասկացությունից: Դրան իրենց դրդում են որոշակի տեսակի իրավունքների, ազատությունների և պարտականությունների առկայությունը, որոնք անձի համար գտնվում են հատուկ իրավական վիճակում՝ «ընդհանուր վիճակի» փուլում²¹:

Անձի իրավական վիճակի տարրի՝ իրավասուբյեկտության առանձնահատկություններն են ուսումնադիրելիս, հանգել ենք իրավասուբյեկտության, որպես անձի իրավական կարգավիճակի իրաց-

²¹Տե՛ս Матузов Н.И. Субъективное право граждан СССР. Саратов, изд.Сарат.ун-та, 1966.С. 77, 92-93:

ման պայմանի: Շեշտադրելով իրավասուբյեկտության տարբերությունը սուբյեկտիվ իրավունքներից և պարտականություններից կոնկրետ իրավահարաբերություններում, համապատասխան իրավաբանական փաստերի առկայության դեպքում, իրավագետներից ումանք եզրահանգում են, որ անձի իրավական կարգավիճակը որոշվում է նրա իրավունակությամբ, այլ ոչ թե սուբյեկտիվ իրավունքներով և պարտականություններով²²:

Ա.Վ. Միցկևիչն իր հերթին նշում է, որ իրավական կարգավիճակը ընդգրկում է ընդհանուր իրավունքներ և պարտականություններ (իրավունակության տարբեր) և քաղաքացիների համար օրենքից (բոլոր հիմնական իրավունքներն ու պարտականությունները, մի շարք քաղաքացիական իրավունքներ և այլն) անմիջականերեն բխող իրավունքներ և պարտականություններ որոշակի կոնկրետ բովանդակությամբ: Ս.Ալեկսենն իրավական կարգավիճակի մեջ ներառում է՝ 1) իրավասուբյեկտությունը և 2) իրավասուբյեկտության բովանդակությունը սահմանող՝ սահմանադրական իրավունքներ ու պարտականությունները:

Իրավական կարգավիճակը երբեմն հասկանում են, որպես կոնկրետ իրավահարաբերությունների (քաղաքացիական, աշխատանքային և այլ) բովանդակությունը կազմող իրավունակության և սուբյեկտիվ իրավունքների ու պարտականությունների համակցություն:

Կարծում ենք՝ իրավական կարգավիճակի և իրավունակության մասնակի կամ ամբողջական նույնականացման դեպքում, այդ հասկացությունները զրկվում են ինքնուրույն իրավական կատեգորիաների հատկանիշներից: Իրավաբանական իրավունքների և պարտականությունների դրսևորման հատուկ փուլի՝ ընդհանուր վիճակի (կարգավիճակի) փուլի, առանձնացումը՝ հնարավորություն է ընձեռնում դիտարկել անձին, որպես իրավունքի սուբյեկտ տարբեր կողմից բնութագրող ինքնուրույն իրավական կատեգորիա:

Իրավունակությունը ներկայացնում է օրենքի վրա հիմնված անձի ունակությունը ունենալ իրավունքներ և կրել պարտականություններ

²² Մանրամասն տե՛ս Դенисов А.И. Теория государства и права, М., 1972. С.459; Галкин Б.А. Советский уголовно-процессуальный закон. М., 1968. С.102-103; Недбайло П.Е. Применение Советских правовых норм. М., 1960. С.99; Хангельдыев Б.Б. К вопросу об объекте административного правонарушения// Сборник ученых трудов. Свердловский юридический институт. Свердловск, 1964. Вып.1. С.147; Явич Л.С. Советское право-регулятор общественных отношений в СССР. Сталинград, 1957. С. 38:

դրանց դրսևորման տարբեր փուլերում: Իրավունակությունը իրավաբանական ավելի լայն կատեգորիայի՝ իրավասուբյեկտության տարր է: Անձին իրավասուբյեկտությամբ օժտելն, նախ և առաջ. նշանակում է ճանաչել անձի՝ որպես բանական էակի, ունակությունը գործել ազատորեն, այսինք՝ պատասխանատու լինել իր արաքների համար, գիտակցել և ղեկավարել դրանք: Իրավունակությունը, ինչպես և իրավասուբյեկտությունը, ընդհանուր առմամբ, չի բացահայտում իրավունքի բովանդակությունը դրա ցանկացած փուլում, այդ թվում՝ տիրապետմանը նախորդող փուլում: Մինևույն ժամանակ, իրավունքը, կամ իրավունքների և պարտականությունների համալիրը չի բացահայտում իրավասուբյեկտության (որպես անձի որոշակի իրավաբանական իրավաբանական հատկություն) բովանդակությունը: Իրավունքի մի փուլից մյուսին, այլ ոչ թե բուն իրավունակության փոփոխության, որը ինչպես կար, այնպես էլ շարունակում է մնալ անձի ունակությունը լինել իրավունքների կրող դրանց դրսևորման ցանկացած փուլում:

Իրավասուբյեկտությունը ո՛չ փոխակերպվում է, և ո՛չ էլ կերպարանափոխվում: Այն միշտ անմիջական կապի մեջ է իրավունքների և պարտականությունների հետ, գոյություն ունի դրանց զուգահեռ, որպես անհրաժեշտ նախադրյալ: Կարծում ենք, իրավասուբյեկտության և իրավունքների՝ որպես ինքնուրույն իրավական երևույթների, միջև կապը հստակ հաշվի է առնում օրենսդիրը:

Հայտնի է, որ դատարանի վճռով անգործունակ ճանաչված անձիք չեն կարող ընտրել և ընտրվել, քանի որ հոգեկան խանգարման հետևանքով չեն կարող հասկանալ իրենց գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք: Հետևաբար, տվյալ խումբ անձինք ընտրություններին մասնակցության փաստը սոցիալական, իրավաբանական հիմքերով տարբերվում է ազատագրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիների ընտրություններին չմասնակցելու փաստից: Այդ երկու խումբ անձիք զրկված են իրենց իրավասուբյեկտությունից՝ չեն կարող ունենալ և իրականացնել ըտրելու և ընտրվելու իրավունքը, հետևաբար, չեն կարող հանդես գալ որպես ընտրական իրավունքի սուբյեկտ:

Հայրենական իրավունքին հայտնի են ինչպես իրավասուբյեկտության, դրա կառուցվածքային տարրերի՝ գործունակության, դեփիկտաունակության զրկման ինստիտուտը, այնպես էլ անձին իր

կոնկրետ իրավունքներից զրկուլու նախադեպը: Այն, որ իրավասուբյեկտությունը և անձի իրավունքները՝ ինքնուրույն իրավական երևույթներ են, վկայում են տարբեր զրկանքների առկայությունը: Այսպես, իրավասուբյեկտության (կամ դրա առանձին տարրի) զրկման հիմք կարող են հանդիսանալ հոգեկան հիվանդությունները, տարիքը, որոնք վկայում են անձի անմեղսունակության մասին: Ավելին, անձի կոնկրետ իրավունքների զրկման հիմք է հանդիսանում իրավախախտումը, իրավունքների չարաշահումը և այլն: Անձին, իր որոշակի իրավունքներից զրկելու օրենսդրի կարգադրությանը (օրենքին) հակառակ, որոշ հեղինակներ դիտարկում են իրավունքներից զրկումը որպես անձի վարչական, քաղաքացիական, աշխատանքային և այլ ճյուղային իրավասուբյեկտության սահմանափակում, որի հետ դժվար է համաձայնել: Կարծում ենք, անհրաժեշտ է հստակ տարբերակել (որի մեջ էլ կայանում է դժվարությունը), այն փաստերը որոնցով պայմանավորված է իրավասուբյեկտության առկայությունը (իրավաբանական պայմաններ) և այն փաստերը որոնք անմիջակետեր են որոշում են կոնկրետ իրավունքների և պարտականությունների ծագմանը և զարգացման դինամիկան, և որոնք հետևաբար կազմում են իրավունքներ և պարտականություններ փաստացի (իրավաբանական) կառուցվածքը: Կարծում ենք, այդ հարցը պատշաճ ձևով չի ուսումնասիրվել, այդ պատճառով իրավագետներից շատերը խոսում են անձին իրավունքներից զրկելու մասին այն դեպքում, երբ գործունեք իրավունքների փաստացի (իրավաբանական) կազմի ծագման և դադարման հետ: Լինում են դեպքեր, երբ անձի գործունակությունը իրավագետները կապում են այնպիսի պայմանների (հանգամանքների) հետ, որոնք անձի առաձին վերցված իրավունքների և պարտականությունների իրացման իրավաբանական փաստերն են:

Ներկայացնելով իրավասուբյեկտության և անձի իրավական կարգավիճակի և դրա տարրի՝ իրավունքների, ազատությունների և պարտականությունների միջև տարբերությունը, հարկ է նշել, որ դրանց ինքնուրույնությունը բացարձակ չէ: Ընդհանրապես, իրավասուբյեկտությունը չի կարող լինել իրավական կարգավիճակից բացարձակ անկախության մեջ: Ընդ որում դրանց կապը կրում է կոնկրետացված բնույթ: Հենց իրավասուբյեկտության և իրավական կարգավիճակի (դրա տարրերի) անխզելիության փաստը այդ հասկացությունների ծագումնաբանական նույնացման հիմքն է: Հիմնվելով իրավասուբյեկ-

տության կոնկրետ տեսակի և համապատասխան իրավունքների, ազատությունների, պարտականությունների, օրինական շահերի անմիջական կապին, կարելի է պայմանականորեն դատել իրավասուբյեկտության ծավալի, դրա ընդլայման կամ կրճատման մասին, այն ժամանակ, երբ ըստ էության, խոսքը վերաբերվում է ոչ թե իրավասուբյեկտության ծավալի, այլ այն իրավունքների, ազատությունների, պարտականությունների և օրինական շահերի ծավալի, որոնց համեմատ անձը հանդիսանում է իրավասուբյեկտ:

Իրավասուբյեկտության որպես որոշակի իրավունքների և պարտականությունների (այդ թվում նաև դրանց ընդհանուր, բացարձակ, և գումարային արտահայտումը) համակցություն (ծավալ) սահմանումն ու դիտարկումը չի համապատասխանում դրա իրական բովանդակությանն ու նշանակությանը: Իրավասուբյեկտությունը չի կարող հանդիսանալ նաև որպես դրա կրողի իրավունքների և պարտականությունների դրոսերման փուլ: Դա ինքնուրույն բարդ իրավական կատեգորիա է, որը գոյություն ունի իրավունքների և պարտականությունների հետ մեկտեղ, և որը վկայում է անձի իրավական ունակության մասին: Այսինքն՝ կրել իրավունքներ և պարտականություններ, դրանց դրսևորման ցանկացած փուլում, ինչպես նաև ինքնուրույն իր գործողություններով կամ օրինական ներկայացուցիչների միջոցով ձեռք բերել, իրականացնել, փոփոխել և դադարեցնել դրանք, պատասխանատվություն կրել դրանց անօրինական իրականացման համար:

ԱՄՓՈՓՈՒՄ

Գիտական հոդվածի հեղինակը, իրավաբանաբանական մտքի պատմության նյութերի հետազոտության հիման վրա, բացահայտում է անձի իրավական դրության տարրերից մեկի՝ իրավասուբյեկտության հիմնարար, սոցիալ-իրավական նշանակությունը, էությունն ու առանձնահատկությունները: Մասնավորապես դիտարկվում են իրավասուբյեկտության կառուցվածքային տարրերը (իրավունակությունն ու գործունակությունը), բացահայտվում է իրավասուբյեկտության բովանդակությունը: Նաև դիտարկվում են իրավասուբյեկտության կառուցվածքի և բովանդակության վերաբերյալ նշանավոր իրավագետների կարծիքները (Ս.Ս.Ալեքսեն, Ս.Ֆ.Կեչեկյան, Ն.Բ. Մատուզով, Ն.Վ. Վիտորով և այլոք): Միաժամանակ ընդգծվում է անձի իրավունքների, ազատությունների պարտականությունների դրսևորման փուլե-

րի, կամքի ազատության և անձի իրավասուրբելտության միջև ուրույն կապի նշանակությունը ժամանակակից ժողովրդավարական, իրավական պետությունում անձի իրավական դրության զարգացման գործընթացում:

Բանալի բառեր— իրավասուրբելտություն, իրավունակություն, գործունակություն, իրավունքներ, ազատություններ, պարտականություններ, դրսևորման փուլեր, կամքի ազատություն:

ПРАВОСУБЪЕКТНОСТЬ КАК ЭЛЕМЕНТ ПРАВОВОГО ПОЛОЖЕНИЕ ЛИЧНОСТИ

Лилит Казанчян
*Ученый секретарь Института философии,
социологии и права НАН РА*

РЕЗЮМЕ

Автор данной научной статьи, на основе изучения материалов из истории политико-правовой мысли раскрывает основное, социально-юридическое значение, суть и особенности одного из элементов правового положения личности— правосубъектности. В частности рассматриваются структурные элементы правосубъектности (дееспособность и правоспособность), раскрывается содержание правосубъектности. В статье также рассматриваются мнения многих известных правоведов (С.С. Алексеева, Н.В. Витрука, Н.И. Матузова, С.Ф. Кечеяна и др.) о структуре и содержании правосубъектности. В тоже время подчеркивается особая связь правосубъектности с этапами проявления прав, свобод, обязанностей личности, «свободой воли» и их фундаментальное значение в формировании правового положения личности в современном, демократическом государстве.

Ключевые слова: правосубъектность, правоспособность, дееспособность, права, свободы, обязанности, этапы проявления, свобода воли.

LEGAL PERSONALITY: THE ELEMENT OF THE LEGAL STATUS OF THE INDIVIDUAL

Lilit Kazanchian

*Scientific Secretary of the Institute of
Philosophy, Sociology and Law of NAS RA*

SUMMARY

The author of this scientific article based on the research in the history of political and legal thought reveals the main socio-legal value, essence and features of the personality-one of the elements of the legal status of individual. In particular we consider the structural cells personality (capability and capacity), reveals the personality.

The article particularly surveys the standpoints of many well-known legal scholars (such as S. S. Alekseeva, S.F. Kechekyan, N.I. Matuzova, N. V. Vitruce, and others) about the structure and content of the legal personality. The author also emphasize the special relationship of personality with the stages of manifestation of the rights, freedoms, responsibilities, personality, "freedom of will" and their fundamental importance in the formation of the legal status of the individual in the modern, democratic state.

Key words: legal personality, legal capacity, rights, freedoms, responsibilities, stages of expression, "freedom of the will".

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՐԺԵԲԱՆՈՒԹՅԱՆ (ԱԲՍՏՐՈՒՈՂԳԻՍՅՏԻ) ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Արտյոմ Խաչատրյան

*ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի դոկտորանտ*

Բացահայտել իրավունքի նշանակությունը հասարակության համար և նրա կոչումը կոնկրետացնելուն է կոչված «իրավունքի արժեքի» կատեգորիան: Մասնագիտական գրականության մեջ այն լայն տարածում չի ստացել: Այնուամենայնիվ, նպատակահարմար է համարվում ուսումնասիրել և հետագա հետազոտման ենթարկել այս կատեգորիան, սակայն ոչ դասական հայացքներով¹:

Իրավունքի արժեքը իրավունքի ունակությունն է ծառայել որպես

¹Մանրամասն տե՛ս Алексеев С.С. Социальная ценность права в советском обществе. М., 1971; Рабонович П.М. Социалистическое право как ценность. Львов. 1985.